Հրապարակված է 26.04.2019թ.
Ամփոփագրում նշված պայմանները
կարող են փոփոխված լինել
Հեռ. (+374 10) 510 510, www.inecobank.am

# ԳՐԱՎՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

| | |
|---|---|
| **Վարկի տեսակ** | Գրավային ապահովությամբ սպառողական վարկ |
| **Վարկառուի նկարագիր** | ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձ |
| **Վարկի արժույթ** | ՀՀ դրամ |
| **Տարեկան անվանական տոկոսադրույք** | 14-19% |
| **Վարկի գումար*** | Անշարժ գույքի գրավով վարկերի համար 2,000,000-25,000,000 ՀՀ դրամ<br>Տրանսպորտային միջոցի գրավով վարկերի համար 1,000,000-10,000,000 ՀՀ դրամ |
| **Ապահովություն[1]** | Գրավ (անշարժ գույք, տրանսպորտային միջոց)<br>Վարկառուի ընտանիքի անդամի երաշխավորություն |
| **Վարկի ժամկետ** | • 60,72 ամիս անշարժ գույքի գրավով վարկերի համար<br>• 60 ամիս տրանսպորտային միջոցի գրավով վարկերի համար |
| **Վարկի տրամադրման միանվագ վճար** | • վարկի գումարի 2% անշարժ գույքի գրավով վարկերի համար<br>• վարկի գումարի 2%, նվազագույնը 30,000 ՀՀ դրամ տրանսպորտային միջոցի գրավով վարկերի համար |
| **Վարկի տրամադրման եղանակ** | Միանվագ, անկանխիկ եղանակով |
| **Վարկի գումարի կանխիկացման վճար** | **0%** |
| **Վարկ/Գրավ առավելագույն հարաբերակցություն** | **Անշարժ գույք**<br>• Գնահատված իրացվելի արժեքի 70%, Երևան քաղաքում գտնվող գույքի դեպքում<br>• Գնահատված իրացվելի արժեքի 65%, Երևան քաղաքից դուրս գտնվող այլ ընդունելի վայրում գտնվող գույքի դեպքում<br>**Տրանսպորտային միջոց** |

[1] Սույն փաստաթղթով սահմանված ապահովության տեսակներից բացի Բանկը ըստ անհրաժեշտության կարող է պահանջել լրացուցիչ ապահովություն/երաշխավորություն/գրավ անկախ վարկի գումարի չափից:

| | |
|---|---|
| | • Գնահատված իրացվելի արժեքի 70% |
| * Վարկի առավելագույն գումարը և տարեկան անվանական տոկոսադրույքը որոշվում են համաձայն հաճախորդի վարկային ռիսկի գնահատականի: | |
| **Մարման եղանակ** | Անուիտետային (տոկոսների և մայր գումարի ամենամսյա հավասարաչափ վճարում) |
| **Ապահովագրություն** | Վարկառուի և համավարկառուների դժբախտ պատահարներից ապահովագրություն ըստ Բանկի պահանջի |
| **Վարկավորման համար երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունների վճարներ**** | **Անշարժ գույքի գրավադրման դեպքում`**<br>Գույքի գնահատման վճար<br>• Մինչև 15.000 ՀՀ դրամ<br>Միասնական տեղեկանք<br>• Մինչև-10.000 ՀՀ դրամ<br>Նոտարական վավերացման վճարներ<br>• Մինչև 15.000 ՀՀ դրամ<br>Գրավի պետական գրանցման վճար<br>• Մինչև 26.000 ՀՀ դրամ<br><br>**Տրանսպորտային միջոցի գրավադրման դեպքում`**<br>Գույքի գնահատման վճար<br>• Մինչև 5.000 ՀՀ դրամ<br>Սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք ՀՔԲ-ից<br>• 3,000 ՀՀ դրամ<br>Գրավի իրավունքի գրանցման վճար<br>• 2,000 ՀՀ դրամ |
| *****Անկախ սույն պայմաններում նշված դրույքաչափերից, երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները կարող են փոփոխվել:*** | |
| **Ժամկետանց պարտավորությունների մարում** | Յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար հաշվարկվում է տույժ` չմարված գումարի մինչև 0.13[2]%-ի չափով |
| **Վարկի պայմանների վերանայման հայտի ուսումնասիրության վճար** | 20,000 ՀՀ դրամ[3] |

[2] Նշված տոկոսադրույքը ենթակա է փոփոխման ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի փոփոխման դեպքում
[3] Վճարը չի գանձվում հայտի մերժման պարագայում

| | |
|---|---|
| **Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ**[4] | **Անշարժ գույքի գրավով վարկի համար**<br><br>*Անհրաժեշտ փաստաթղթեր՝ մինչև վարկի հաստատումը*<br><br>• Վարկառուի անձը հաստատող փաստաթուղթ և հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ)<br>• եկամուտները հիմնավորող փաստաթուղթ<br>• Անշարժ գույքի սեփականության վկայական և հիմք<br>• Անշարժ գույքի սեփականատերերի և համասեփականատերերի անձը հաստատող փաստաթղթեր<br>• Ամուսնության վկայական (եթե ամուսնացած է), ամուսնալուծության վկայական (եթե ամուսնալուծված է) կամ մահվան վկայական (եթե այրի է), (եթե գույքը ձեռք է բերվել ամուսնությունից հետո կամ մինչև ամուսնալուծվելը)<br>• Ամուսնացած կամ ամուսնալուծված լինելու դեպքում կնոջ/ամուսնու անձնագիր (եթե գույքը ձեռք է բերել ամուսնությունից հետո կամ մինչև ամուսնալուծվելը)<br>• Անշարժ գույքի նախնական գնահատում<br>*Անհրաժեշտ փաստաթղթեր՝ վարկի հաստատումից հետո*<br><br>• Անշարժ գույքի միասնական տեղեկանք<br>• Անշարժ գույքի գրավի իրավունքի գրանցման վկայական<br><br>**Տրանսպորտային միջոցի գրավով վարկի համար**<br><br>*Անհրաժեշտ փաստաթղթեր՝ մինչև վարկի հաստատումը*<br><br>• Վարկառուի անձը հաստատող փաստաթուղթ և հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ)<br>• եկամուտները հիմնավորող փաստաթուղթ<br>• Ավտոմեքենայի հաշվառման/գրանցման վկայագրի պատճեն և սեփականության վկայականի բնօրինակը (պահվում է Բանկում մինչև գրավով ապահովված պարտավորության ավարտը)<br>• Ավտոմեքենայի սեփականատիրոջ անձը հաստատող փաստաթուղթ (եթե սեփականատերը չի հանդիսանում վարկառուն) |

[4] Անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել այլ փաստաթղթեր

| | |
|---|---|
| | • Ամուսնության վկայական (եթե ամուսնացած է), ամուսնալուծության վկայական (եթե ամուսնալուծված է) կամ մահվան վկայական (եթե այրի է), (եթե գույքը ձեռք է բերվել ամուսնությունից հետո կամ մինչև ամուսնալուծվելը)<br>• Ամուսնացած կամ ամուսնալուծված լինելու դեպքում կնոջ/ամուսնու անձնագիր(եթե գույքը ձեռք է բերել ամուսնությունից հետո կամ մինչև ամուսնալուծվելը) և դատարանի որոշումը, եթե ամուսնալուծվել է դատարանով<br>• Տրանսպորտային միջոցի նախնական գնահատում<br><br>*Անհրաժեշտ փաստաթղթեր՝ վարկի հաստատումից հետո*<br><br>• Ավտոմեքենայի օտարման նկատմամբ սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք ՅՔՔ-ից (բնօրինակ)<br>• Ավտոմեքենայի գրավի իրավունքի գրանցման վկայական ՅՔՔ-ից (բնօրինակ) |

**Ծանոթություն՝**

1. Բանկն իրավասու է հաճախորդի հետ պայմանագիր կնքել սույն փաստաթղթով սահմանված սակագներից և պայմաններից տարբերվող այլ սակագներով և պայմաններով:
2. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՓՈՓՈԽՎԵԼ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ: Եթե հաճախորդը համաձայն չէ տոկոսադրույքի փոփոխության հետ, ապա իրավունք ունի միակողմանիորեն վաղաժամկետ լուծել պայմանագիրը՝ վերադարձնելով տրամադրված վարկի հիմնական գումարն ամբողջությամբ և վճարելով հաշվարկված տոկոսները և այլ վճարները: Անկախ Բանկի կողմից սահմանված սակագնի մեծությունից, վարկի (փոխառության) տոկոսադրույքը չի կարող գերազանցել ՀՀ ԿԲ կողմից սահմանված բանկային տոկոսադրույքի կրկնապատիկը:
3. Վարկը ցանկացած ժամանակ կարող է վաղաժամկետ մարվել, որի դեպքում տույժեր և այլ վճարներ չեն գանձվում:
4. Հաշվին մուտքագրված ցանկացած գումար որպես կանոն Բանկի կողմից ուղղվում է մուտքագրման պահին առկա՝ Հաճախորդի կողմից Բանկին Վարկի պայմանագրի ուժով վճարման ենթակա գումարների, այդ թվում՝ միջնորդավճարների, տույժերի, տոկոսների, Վարկի գումարի մարմանը: Բանկն իրավունք ունի սույն կետով սահմանված մարումն իրականացնել այլ հաջորդականությամբ:
5. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՏՈԿՈՍԱԳՈՒaՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՏԵՂԱԴՐՎԱԾ Է ԻՆԵԿՈԲԱՆԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ (www.inecobank.am) «Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման ուղեցույց» էջում:
6. Տոկոսադրույքը կիրառվում է վարկի նվազող մնացորդի նկատմամբ՝ ելնելով տարում 365 օրվա հաշվարկից:
7. Վարկառուի տարիքը վարկի դիմելու պահին պետք է լինի 23-65 տարեկանի միջակայքում:
8. ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ/ԿԱՄ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ, ԻՍԿ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԳՐԱՆՑՎԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ: ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԻ ՀԱՇՎԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԵԼԻՍ ԳՐԱՎԸ ԲԱՎԱՐԱՐ ՉԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՈՒՄ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԻՆ:

9. Վարկի տրամադրման դրական որոշման գործոններն են`
    - կայուն եկամտի աղբյուր,
    - դրական կամ չեզոք վարկային պատմություն,
    - արժանահավատ և լիարժեք փաստաթղթեր,
    - բավարար գրավի առկայություն:
10. Վարկը մերժելու գործոններն են`
    - վարկը մարելու համար անբավարար եկամուտներ,
    - հաճախորդի կողմից ոչ արժանահավատ տվյալների տրամադրում,
    - բացասական վարկային պատմություն,
    - հաճախորդի եկամտի աղբյուրի ռիսկային ոլորտ,
    - բավարար գրավային ապահովության բացակայություն:
11. Վարկի տրամադրման որոշման կայացում և հաճախորդին տեղեկացում` մինչև 2 աշխատանքային օր:
12. Վարկի տրամադրման ժամկետ` դրական որոշման կայացումից հետո մինչև 7 աշխատանքային օրվա ընթացքում:
13. Վարկերը ձևակերպվում են Բանկի մասնաճյուղերում և կենտրոնական գործառնական ստորաբաժանումում:
14. Բանկը նախքան վարկային պայմանագրի կնքումը տրամադրում է Անհատական թերթիկ` համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված «Բանկի և ավանդատուի, կրեդիտավորողի և սպառողի հաղորդակցման կարգը, պայմանները, ձևերը և նվազագույն պահանջները» կանոնակարգ 8/05-ի:
    Փաստացի տոկոսադրույքի հաշվարկի օրինակ`
    *Վարկի գումար` 10,000,000 ՀՀ դրամ*
    *Տարեկան անվանական տոկոսադրույք` 15%*
    *Ժամկետ` 72 ամիս*
    *Վարկի տրամադրման միանվագ վճար` 200,000 ՀՀ դրամ*
    *Գրավադրվող գույքի գնահատման վճար` 10,000*
    *Կադաստրի միասնական տեղեկանքի վճար` 10,000 ՀՀ դրամ*
    *Գրավի պայմանագրի նոտարական վավերացման վճար` 15,000 ՀՀ դրամ*
    *Գրավի իրավունքի գրանցման վճար` 26,000 ՀՀ դրամ*
    *Տարեկան փաստացի տոկոսադրույքը կկազմի` 17.26%:*
15. Այն միջնորդավճարները, որոնք ենթակա են ԱԱՀ-ով հարկման, ներառում են նաև ԱԱՀ-ն: